

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատր 40 փարայ է : — Պօրիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արժաթ Յէճիա պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ ՊՅ զրշ, դարձաւ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման սողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ օր եւ է գրութիւն պէտք է ըւզուի առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոց վարի գրանը կից Նոր Գրատունը :

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ահա սակի Սերաստիոցէն ապրիլ 1 թուով գրած ուրիշ ստեղծի գէպը մ'ալ :

« Գարբին խուլ Պապիկ անուն անձը՝ ասիէց քանի մը ամիս յառաջ իւր բնամեկըովը Աղճոց—Վրշա ըստած ստաճիկ գիւղը դացած է եղեր, գարբ խութիւն քնելու համար : Գիւղացւոց մէջէն չորս արեկաց անանկով Պապիկին աղջիկը, կիտրճին անոր կուսութիւնը բռնաբարել : Նախորդ տարոյն գեկա՝ ամառն մէջ երեկոց մը յարմար առիթ սեպելով աղջկան մօրը եւ եղբօրը սուներ չըլլողը, երկուքնեկը ալ հետեւինն առած՝ տանը ներսի կարբի կ'արձակին, եւ կրօնէն խեղճ օրիորդը որ ուզած տեղերնին ստանին : Այս միջոցին աղջիկը ծերունի հօրը վրայ կիցնայ, եւ հայրն ալ կապառայանէ զայն : սակայն այնչափ սաստիկ կը ծեծեն թշուառ ծերունին որ չնչապարտ կիցնայ : Չարագործները օրիորդը բռնի կտանին բաւական հեռու տեղ մը եւ իրենց չոր կիրքը կ'ազեցունեն, յետոյ կ'սորճին անմեղ աղջիկը մեռցունել, բայց մէջերնուն եր-

կու հողի կարգիլեն այս եղեւնացիք ծութիւնը : — Հիմա քննութեան տակ ձգուած են յիշեալ չարագործ անձինքը : Քաջայոյս եմք որ իրենց բրածը պիտի խոտովանին քիչ օրէն, եւ արժանաւոր պատժով պիտի պատժուին : Այս մասին Ահարոնեան Յակոբ էֆէն տիին աշխատութիւնը գոհութեան արժանի է » :

— Բումէլի — Հիտարի Թագ. Խորհուրդէն :

« Ապրիլ 16 չորեքշաբթի օրը ամեն Տեղապահ Սրբազան Հայրը Հիտարու թագիս խեղճ ու ողորմելի հրկիզելոց այցելութիւն ըրաւ, իւր քաջաբերիչ եւ միսթարական աստուածազօրեցիկ խօսքերովն գհրկիզեալսն միսթարեց, նա մանաւանդ ամեն մէկուն ցաւերն ու վիշտն քննելով իրենց այլ եւս օգնութեան յոյս տածեց : Կառք Նորին սրբազնութեան որ ազգին խեղճերուն եւ տասապելոց այսպէս գուիթ եւ խնամք կաանի : Եւ ահա երէկ որ էր ապրիլ 13, Տնտեսական պատուարժան խորհրդոց մեծ անգամը, Ս. Հօր չնորհիւն, բարեսէր ազգայիններէ ժողովեալ ստակն առած անձամբ Հիտարու թագը եկան եւ Տեղապահ Ս. Հօր նամակին համեմատ առ հասարակ կարօտ հրկիզելոց բաշխելով յանչափս միսթարեցին :

Արդարեւ ամեն . Ս . Հօր այս ազգա-
 սիրական բարեգործութիւնն Հիւսարութե-
 ղեցւոց սրտերն խորին շնորհակալութեամբ
 կընցնէ , որ այս անտանելի հարուածէն
 շուարեալ յետին թշուառութեան մէջ
 կտառացելին . նաեւ Միջագիւղի բարե-
 սէր ազգայնոց կողմանէ՝ ձեռամբ մեծ .
 Ս . Յակոբ աղա Քարուճեանի ժողովուած
 806 զուրուշի գումարն ընդունեցանք որ
 Ս . Հօր ներկայութեանը բաշխուեցաւ
 եւ ուրիշ պակասան հորին սրբազնութիւ-
 նը իւր քսակէն շնորհեց . ուրիշ բարեսէր
 անձի մը կողմանէ ալ 2 (խաղէվի) բրինձ
 ընդունեցանք որ բաշխուեցաւ ըստ ար-
 ժանայն :

Արդ . . . Տէր , Թաղ . խորհուրդս Հի-
 սարի թաղեցւոց խորին շնորհակալութեան
 թարգման հանդիսանալով կենդրէ որ բա-
 րեհանձիր յառաջիկայ շաբաթաուոր ազ-
 գօգուտ թերթերուդ մէջ գեանդելով հը-
 րապարակաւ մեր շնորհակալութիւնն յայտ-
 նել , թէ՛ ամեն . Տեղապահ Ս . Հօր եւ թէ՛
 ամեն բարեսէր եւ ողորմած ազգայնոց որ
 իրենց նուէրներովն խեղճ հրկիղեախներն
 փոխթարեցին » :

—Անցեալները շատերուն հետ
 մենք ալ մեծ յառ զգացինք , լսելով
 թէ՛ ի սկիստարի Ս . Խաչ թաղի ազ-
 ջկանց վարժարանին խնամակալուհի
 տիկնայք հրաժարեր են նիւթակա-
 նին պակասութեան պատճառաւ : Բա-
 րեբաղդարար մեր այս ցաւը մէկ քա-
 նի օր միացն տեւեց , որովհետեւ շու-
 տով զգալի եզաւ խնամակալուհի տիկ-
 նայց հրաժարանն վառասկօր հետեան
 քը . եւ թաղին պատուարժան խոր-
 հուրդն ու միանգամայն խնամակալու-
 թեան նիւթապէս օգնել խոտացող
 Արարատեան ընկերութիւնը անմիջա-
 պէս հազ տարին խնամակալ տիկնի-
 ները իրենց գործին մէջ հաստատել
 եւ պէտք եղած օգնութեան ստուե-

լուն վրայ ապահով ընելու : Հետեւ
 բարձր գործերու սկսած են շարունա-
 կել իրենց գործը , ե յիշեալ թաղին
 աղջկանց վարժարանը ինչպէս յառաջ
 նայեպէս եւ այժմ՝ բարեկարգ ու ար-
 դիւնաւոր վիճակի մէջ կը անուի :
 Պարտիւք շնորհակալ բլրայ ազնիւ խը-
 նամակալուհեաց որ անձանձիր կաշ-
 խատին , եւ միանգամայն Արարատեան
 ընկերութեան՝ որ սկսաւ աւելի փո-
 թաղանութեամբ գործել եւ պէտք ե-
 ղած նպատար հասցունել : Ըստ մեզ
 առաջին կարգի բարերարք են ազգա-
 յին դատախարարութեան համար ջո-
 նացողները :

—Այս օրերս Արապկիրի հանրա-
 գիր մը եկեր է Պատրիարքարան , ո-
 բով շնորհակալ կըլլան իրենց առաջ-
 նորդ արժ . Տ . Տիմոթէոս Կ . վարդա-
 պետին հալուական աշարար խնամոց
 համար :

Յիշեալ քաղաքէն մեզի գրու-
 ծին նայելով , Կորին արժանապա-
 տութեան հոն երթալէն ի վեր , մեր
 ազգայիններէն ոչ ոք կրօնափոխու-
 թեան դիմած է , եւ ընդհակառակիւ
 արդէն կրօնափոխ եզակներէն ամանք
 կիսողքեն իրենց անունը գործեալ
 մեր ազգային ատուարին մէջ՝ արձանա-
 գրել տալ :

Բողոքականաց Աւետարները ծա-
 նուցեր է թէ՛ բաղքականք ձօտերս
 Արապկիրի մէջ ժողովարան մ'ալ պի-
 տի շինեն : Մեր թողթակիցք ասոր
 դէմ գիտալութիւն կընէ թէ՛ « եթէ
 ստակիսն շատ է , հարիւր հաս ալ կըր-
 նան շինել . սակայն ուրիշ ժողովարան
 շինելու ինչ հարկ կայ . իրենց արդէն
 ունեցած ժողովարաններէն մէկը դօց
 է , թող զպէս բանան . . . »

X

4

—Ազգային Պատրիարքարանի տաճ-
իսրէնի գրադրապետ Գրիգորեան Գե-
որգ Էֆէնտիին երրորդ աստիճանի
երկրորդ կարգի պաշտօնատարութիւն
արտեցաւ :

—Երաւարկանց վանուց սեղանա-
պարհ. Յակոբ Էֆէնտիին երրորդ աս-
տիճանի պաշտօնատարութիւն արտե-
ցաւ :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գանձուց պաշտօնեաց Սատրգ-
Էֆէնտիին մէջդիւտութեան աստիճան
արտեցաւ :

—Էլիպի պաշտօնէտութիւնը Է-
տիմի կուսակալութեան նախորդ-
ընդհանուր կառավարիչ Խուրշիափա-
չային յանձնուեցաւ :

—Խաիրնէի ընդհանուր կառա-
վարի կարգեցաւ Աորմ փաշա, մէ-
զլուութեան աստիճանաւ :

—Չինուորական գործուց պաշաօ-
նէին Միտիէլար ընտրուեցաւ Էլ-
դաֆի նախորդ պաշտօնեաց Հանտի
պէյ :

—Չինուորական ժողովին անդամ
կարգեցաւ Ահմէտ պէյ, որ նոյն պաշ-
տօնատան մէջ ուրիշ պաշտօն կրկարէր :

—Հեռագրէ մը կիսնացուի թէ
Պաղատաի կառավարիչ Միտհաթ փա-
շան անցեալ շաբաթ օրը Տիեարպէ-
րիքէն դէպի Խ. ր պաշտօնատեղին ճամ-
բայ ելեր է :

—Թողտաի հումէական ազգայ-
նաց երևելիներէն Փկիսպարտեան Ազա
պէյ Էֆէնտիին երրորդ աստիճանի
պաշտօնատարութիւն արտեցաւ :

—Գիլիսի երևելիներէն Սիլահեան
Գեորգ Էֆէնտիին երրորդ աստիճանի
պաշտօնատարութիւն արտեցաւ :

—Հումիէական ազգայիններէն Բար-
սեղեան Անտօն Էֆէնտիին երրորդ
աստիճանի պաշտօնատարութիւն ար-
տեցաւ :

—Փարիզէն մայրաքաղաքս քաչ-
ուած հեռագրի մը նայելով հասարա-
կաց շինութեանց պաշտօնեաց վտեմ,
Տախուս փաշան այսօր (շաբաթ) Մար-
տիէպի շոգեհատով մայրաքաղաքս
պիտի հասնի և օտմանեան երկաթուղ-
եաց նկատմամբ յօրինուած դաշնա-
դիրը վէհ. Սուլթանին ուշագրու-
թեանն յանձնելով, վերջն ալ Փարիզ
պիտի դառնայ դաշնագրոյն գործա-
դրութիւնը կատարելու համար :

—Ինչպէս որ արդէն ամենուն ծա-
նօթ է, տաճկական մուհարրէմ ամ-
սոյն մէջ Պարսիկք ստիպութիւն ու-
նին իրենց մարդարէին (Ապի) մահը
պահանջարութեամբ ասնելու : Վալի-
տէ—խանի մէջ բնակող Պարսիկք, որ
բաւական շատուոր են, այս աարի Է-
լենց սենեակները ինչպան սոց սե-
չուխայսլ ծածկեր են, բայց որովհե-
տեւ յիշեալ խանին մէջ ջանի մը քը-
րիստանեաց ալ կրնակին, Պարսիկք
զանոնք ալ կ'ապիպեն իրենց պէսը-
ներու : Հայ վաճառական մ'ալ այս
բանիս ընդդիմացեր է, ըսելով թէ
Տաճկաստանի մէջ մէկը չի կրնար իրեն
ըսել թէ քու հեռուած կրօնքէդ դաս
այս ինչ կրօնքին տօներն ալ կատարէ.
բայց հազիւ հազ խօսքը կրնացնէ. և
տհա Պարսիկք վրան յարձակելով կը
հարուած են զինքը. խեղճը ալ չ'ընդ-
դիմանարով սրահանջմին կկատարէ,
և միւս քրիստանեացք ալ կատարուին
Պարսկաց սրահանջմունքները կատա-
րել :

—Մայրաքաղաքիս բրուտական

դեպքանը՝ որ Թիօրէնցայի դեպքան սրոշում է, երեքշաբթի օրը պատահաւորաւ օգոստ . Սուլթանին ներկայանալու, և հետեւեալ օրը մեկնեցաւ :

—Պաշտօնէից ժողովոց անգամ ճերմի՞ Սալի փաշան այսօր վաղը գէպի Մէքքէ օգափոխութեան համար պիտի ուղևորի, և օգոստ . Սուլթանը ճամբու ծախքի համար 23000 դուրուշ շնորհեր է եղեր :

Պիլճիգա ընկերութիւն մը կազմուեր է, Չինաստանի մէջ հեռագրահան գիծերն աւերջունելու նպատակաւ :

—Եւրօպական լրագիրներէն սմանք կրտսն թէ բրէնա Նարոյէներ Իտալիա պիտի երթայ աւարիական իտալական և գաղղիական նիգակակից միութեան խնդրոյն նկատմամբ ամենակարեւոր տեղեկութիւններ ասանելով վիթթօր—Էմմանուէլ թագաւորին հետ տեսնուելու համար :

—Պիլճիգայի թագաւորին և թագուհոյն ամառը քանի մը շաբաթ Գաղղիա անցնելին դեռ սաւազում չէ :

—Կը հաւատեն թէ Խաղից թագաւոր վիթթօր—Էմմանուէլի երկրորդ արդէ Տիւրք ա՛ջութի եթէ Սպանիոց գահը առաջարկեն, պիտի ընդունի :

—Հեռագրէ մը կիմանամք որ Գէսրդ թագաւորին հօրեղբայրը Տանիմարդայի կիչեօմ իշխանը երկուշաբթի օրը Գօրֆու հասեր է, նոյնպէս Անդղիոց և Ռուսիոց դեսպաններն ալ Գօրֆու գացեր են :

—Գաղղիոց Նարոյէն Գ. կայսրը այս օրերս իր Յէրդ շրջանը կատարեր է, Եպին վեհապետութիւնը 1808

ապրիլի Տին ծնած է . ըստ լստինցոյ այ յառաջիկայ մայիս ամսոյ կայսրու հին 13 տարեկան հասակը պիտի մտնէ . կայսերական թագածուանդ իշխանը ըստ լստինացոյ այ ամսի 16ին 13 տարեկան հասակը մտնէ :

—Ասկէց յառաջ որչափ որ եւրպական լրագիրք Գաղղիոց կայսրու այն յարեւերս ճանապարհորդութիւնը ընելուն վրայ եղած տարածայնութիւնները սուտ հանած են, այրամենայնիւ գարձեալ հասնականութիւն . այս մասին եւրօպական լրագիր մէջ այսպէս գրում է :

« Երեսուցէմ ընելիք ճանապարհորդութեան գալով, կրտէ յիշեալ լրագիրը, կայսրն ինքն իսկ այս ճանապարհորդութեան յատակագիծը պարտաւեր է . օգոստաշուք ճանապարհորդու հին Պերութէն սկսելով ցամաքէն պիտի երթայ Լիբանանու բրէտանէն Տիւրքու, և ուրիշ մէկ քանի օրեր պիտի հանդիպի և քանի մ'օրը Եօթըր—ամառ—ար Գարմէլի մէջ պիտի հանդիպի, ուրիշ պիտի բռնէ Եստրէթի ճամբան . արդարեւ դեռ ոչ գիտէ կայսրու հոյն սրոշեալ ճանապարհորդութեան ժամանակացոյցը այց միայն կկարծուի թէ կարուհին հոկտեմբերի մէջ Սիւէիշ ափ երթայ, շրանցքին հանդիպին նեկայ գանուելու, եթէ մինչև այն տեն շինու թիւնը լիննայ » :

Պաշտ Ս. Հրեշտակապետ եկղեցւոյն փոզցը ծախու տուն մը կա Ռուզոյր պէաք է Ռենդափան խաղա՛ծի 663 թիւ խանութք Մ. Գաբրիէլ աղային հետ տեսնուի :

ՏՅՕՐԷՆ ԵՒ ՏԷ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵ
ՏԱԼԱՐՈՒԹԻՒՆ Գ. Յ. ԲԵՐԲՅԵԱԿ